

ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այսպես կոչված՝ ընդհանուր կամ վաղ գերմանական շրջանի և առանձին բարբառային խմբերի ձևավորման ու հետագա ինքնուրույն զարգացման ողջ ընթացքում հնչյունական փոփոխություններից բացի (ինչպես՝ բաղաձայնների տեղաշարժ, ձայնավորների գերմանական համակարգի ձևավորում, ուժգնության շեշտի կայունացում բառասկզբի վանկի վրա և դրա հետ կապված վերջընթեր վանկերի սղում ու նաև արմատի կառուցվածքի փոփոխում) կատարվել են նաև ձևաբանական ընդհանուր փոփոխություններ՝ ուղղված հիմնականում հ.ե. թեքման բարդ համակարգի տարալուծմանն ու որոշ առումով նաև պարզեցմանը: Ձևաբանական պարզեցմանը զուգահեռ, որպես շարահյուսական հարաբերությունների արտահայտման միջոց, սկսել է ծառայել շարադասությունը, արտաքին թեքման սղված ձևերին փոխարինել են որոշ վերլուծական կառույցներ, ինչի հիման վրա էլ գերմանական լեզուների զարգացման հիմնական առանձնահատկությունը համարել են համադրական լեզվակառուցվածքից անցումը վերլուծական լեզվակառուցվածքի: Իսկ ի՞նչն է պատճառ հանդիսացել նման փոփոխությունների համար: Գերմանական ձևաբանական համակարգի ձևավորման համար, ըստ որոշ գիտնականների, առանձնահատուկ նշանակություն է ունեցել ուժգնության շեշտի կայունացումը բառի առաջին վանկի կամ արմատի վրա, սա էլ իր հերթին հանգեցրել է վերջընթեր անշեշտ վանկերի թուլացմանն ու սղմանը: Արդյունքում կատարվել է բառերի ծավալի կրճատում և որոշ վերջավորությունների սղում, ինչն էլ պատճառ է հանդիսացել հ.ե. ընդհանրության շրջանի բազմատեսակ վերջավորությունների քայքայմանը գերմանական լեզուներում: Ստորև կփորձենք ցույց տալ, որ այս բոլոր փոփոխությունների հիմքում ընկած է ներլեզվական հակադարձ ընթացող միտումների ազդեցությունը:

Քանի որ տվյալ լեզվի ձևաբանական տիպը պայմանավորում է այդ լեզվում հոլովի քերականական կարգի առկայությունը, ձևաբանական փոփոխությունների հիմքում ընկած միտումներն էլ պարզորոշ դրսևորվում են հենց հոլովական համակարգում: Ուստի գերմանական լեզուներում հոլովական վերջավորությունների ու հիմքակազմ ածանցների համակարգում կատարված փոփոխությունները ներկայացնելու համար համեմատենք «մարդ» իմաստն

արտահայտող բառածևի հոլովական վերջավորությունները լատիներենում, գոթերենում ու հին վերին գերմաներենում.

	լատիներեն		գոթերեն	հվգ.
	ուղղ.	hom-o	gum-a	gom-o
եզակի բ.	սեռ.	-in-is	-in-s	-in
	տր.	-in-i	-in-	-in-
	հայց.	-in-em	-an-	-un-
	կոչ.	-in-e		
բազմ.	ուղղ.	-in-es	-an-s	-un-
	սեռ.	-in-um	-an-e	-on-o
	տր.	-in-ibus	-am-	-om-
	հայց.	-in-es	-an-s	-un-

Գերմանական լեզուներում վերջընթեր վանկերի սղումը հանգեցրել է արմատի կառուցվածքի փոփոխմանն ու արմատական ձևայնի կարևորմանը, ուստի տվյալ բառածևում, այսպես կոչված, իմաստային կենտրոնը դարձել է արմատական վանկը՝ իր վրա վերցնելով միաժամանակ ձևաբանական հիմնական ծանրաբեռնվածությունը: Այս ամենին զուգահեռ փոխվել է քերականական ցուցիչ-վերջավորությունների համակարգը: Վերոհիշյալ օրինակում արդեն պարզորոշ երևում է գերմանական լեզուներում հոլովական վերջավորությունների կրճատմանն ու սղման միտումը, ինչի հետևանքով որպես տվյալ հոլովի քերականական նշույթավորման միջոց հանդես է գալիս հիմքակազմ ածանցը՝ փոխարինելով համապատասխան հոլովական ցուցիչին կամ միաձուլվելով նախնական հոլովական վերջավորության հետ, ինչպես օրինակ՝ գոթ. ո-հիմքի *guma* գոյականի եզ. հայց. *gum-an* ձևը՝ ի տարբերություն լատ. *hom-in-em* ձևի, կամ եզ. տր. *gum-in*, իսկ լատիներենում՝ *hom-in-i*, եզ. սեռ. *gum-ins* (հին վերին գերմաներենում՝ *gumōn*) – լատ. *hom-in-is*, հոգն. տր. *gum-am* – լատ. *hom-in-ibus*¹: Այսպիսով, մինչ լատիներենում յուր. հոլով առանձնանում է հատուկ վերջավորությամբ՝ բացառությամբ հոգն. ուղղականի և հայցականի, որոնք ձևով նույնն են, գոթերենում նկատելի է առանձին հոլովական վերջավոր-

¹ Տարբեր ծայնավորումը վկայում է նաև հիմքակազմ ածանցում մասնակիորեն պահպանված հերթագայության մասին, քանի որ հ.ե. լեզուների զարգացման վաղ շրջաններում հիմքակազմ ածանցն անվանական ձևերում նույնպես ենթարկվել է ծայնդարձի օրենքներին, և նշված օրինակները ցույց են տալիս գերմանական լեզուներում պահպանված ծո/տ հերթագայությունը՝ *gum-an* (հ.ե. -on-an) : *gum-ins* (հ.ե. -en-os)

րությունների կրճատումը, իսկ ահա հին վերին գերմաներենում (հվգ.) բոլոր հոլովներում, բացառությամբ հոգն. սեռականի, բացակայում են հատուկ վերջավորությունները: Գերմանական լեզուների զարգացման ավելի ուշ շրջաններում քայքայվել է նաև հիմքակազմ ածանցների նախնական համակարգը: Ընդ որում հիմքակազմ ածանցը պահպանվել է հիմնականում այն դեպքերում, երբ հոլովական վերջավորության բացակայության պայմաններում միայն այն կարող էր ընկալվել որպես տվյալ հոլովի ցուցիչ:

Քերականական վերջավորությունների սղման հետևանքով փոխվել է անվանական ձևերի նախնական եռանդան համակարգը. արմատ + հիմքակազմ ածանց + թեքույթ կառուցվածքի փոխարեն գերմանական լեզուներին բնորոշ է եղել արմատ + թեքույթ երկանդան կառուցվածքը: Նման երկանդան կազմություններ, ի դեպ, ըստ է. Մակակի ներկայացված են եղել դեռևս գերմանական լեզուների զարգացման նախնական փուլերում՝ արմատական հիմքերի մի սահմանափակ խմբում, ինչպես օր.² եգ. ուղղ. *burg-s/z, եգ. սեռ. *burg-iz/az, եգ. տր. *burg-i և այլն³: Այստեղ թերևս գործ ունենք լեզվի զարգացման ընթացքում հակադարձ ընթացող և կրկնվող միտումների հետ, քանի որ, ինչպես գրում է Յու. Գաբրիելյանը, ցանկացած միտում լեզվի պատմության որոշակի ժամանակահատվածում համամասնական հարաբերությունների ստեղծումից հետո սկսում է գործել հակառակ ուղղությամբ⁴, իսկ որոշակի ժամանակահատված անց նույն միտումը կարող է կրկնվել ձևափմաստային համարժեք կաղապարների և ծագումնաբանական-տիպաբանական նմանակների տեսքով⁵: է. Մակակը անվանական համակարգի նախնական փուլի համար սահմանում է և երկանդան և եռանդան բառածներ: Ընդ որում ավելի տարածված և գործունե եղել է եռանդան տիպը, որը, սակայն, հակադարձ միտումների ազդեցությամբ փոխարինվել է սկզբնապես ավելի սահմանափակ կիրառություն ունեցող երկանդան ձևերով: Եթե հաշվի առնենք նաև այն, որ ավելի սակավաթիվ և հազվադեպ գործածվող ձևերը ավելի նախնական կառույցներ են հանդիսանում, ապա ստացվում է, որ միտումը հետ է ընթացել՝ դեպի նախնական ձևերի ակտիվացում: Հիմքակազմության ու թեքույթների պարզեցման նման գործընթացներ կատարվել են նաև բայական համակարգում, սակայն ավելի դանդաղ: Թեև հին վերին գերմաներենում արդեն աստիճանաբար սկսվել է թեմատիկ ծայնավորի և հիմքակազմ ածանցների կրճատման գործընթացը, սակայն բայական համակարգի պարզեցումը

² Историко-типологическая морфология германских языков: Фономорфология, парадигматика, категория имени, 1977, էջ 91

³ Յու. Գաբրիելյան, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, 2001, էջ 81, 177

⁴ Յու. Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 204

հիմնականում միջին վերին գերմանական (մվգ.) շրջանում է կատարվել և հվգ.-ում ուժեղ բայերի համակարգում դեռևս պահպանվել է անվանական համակարգում արդեն անհետացած եռաձևույթ կառուցվածքը: Ընդհանրապես, ինչպես ցույց է տալիս գերմաներենի ձևաբանական համակարգի զարգացումը, բայական և անվանական հարացույցներում փոփոխությունները համընթաց չեն եղել: Ուստի այն ընթացքում, երբ անվանական հարացույցում սղվել են հիմքակազմ ածանցները, բայական համակարգում դրանք դեռ որոշ ժամանակ պահպանվել են, իսկ երբ անվանական հարացույցում հետզհետե ավելի պարզորոշ է դրսևորվել հարացույցային շարքերի բազմազանության վերացման միտումը, որը կներկայացնենք ստորև, ապա բայական համակարգում պահպանվել է բայերի երկու կարգի՝ ուժեղ և թույլ բայերի տարբերակումը, և եթե անվանական հարացույցում անհետացել են անկանոն ու թույլ հոլովման տիպերը, բայական համակարգում պահպանվել են այնպիսի անկանոն բայերի շարքեր, ինչպես օրինակ՝ *sein* «լինել» և *haben* «ունենալ» բայերը⁵:

Անվանական հարացույցի պարզեցումը գերմանական լեզուներում կատարվել է նաև հոլովման տարբեր հիմքերի համաբանական ընդհանրացումներով և հոլովման տիպերի բազմազանության վերացմամբ: Գրեթե բոլոր հին գերմանական լեզուներում անվանական համակարգի այսպես կոչված՝ թույլ օղակները, այն է՝ համեմատաբար ավելի անկանոն, թերի հոլովման տիպերը, ինչպես օրինակ՝ -u-, -r-, -s- հիմքերը, աստիճանաբար նմանվել են ավելի կանոնավոր, գործուն -a-, -ō-, -i-, -n- հիմքերին: Այսպես, ընդհանրապես բոլոր հ.ե. լեզուներին բնորոշ հարացույցային կարգերի բազմազանության հաղթահարման և վերացման միտումը գերմանական լեզուների զարգացման վաղ շրջաններից սկսած պայմանավորել է գերմանական անվանական հարացույցի զարգացումը՝ ուղղված լինելով վերջինիս միասնականացմանը: Ժամանակակից գերմաներենում հոլովման հարացույցային տարբերակները պահպանվել են միայն երեք տիպի հոլովումների տեսքով՝ ուժեղ, թույլ, իգական: Գերմաներենն այստեղ հետաքրքիր օրինաչափություն է ցուցաբերում՝ տարբերվելով մյուս հ.ե. լեզուներից: Մինչ բոլոր լեզուներում ծայնորդահանգ հիմքերն (-r-, -n-) են կորցրել իրենց քերականական նշանակությունը և միացել մյուս հիմքերին, գերմանական լեզուներում ոչ միայն պահպանվել է -n- հոլովումը, այլ դարձել է ավելի գործուն նոր ձևերի կազմության ժամանակ: Այն ընկած է գոյականների ու ածականների թույլ հոլովման հիմքում: Հոլովման տարբեր հիմքերի միասնականացումը գերմանական լեզուներում բացատրելու համար կրկին կարող ենք դիմել լեզվի բնականության դրույթներին, քանի որ լեզվական փոփոխությունների հիմքում ընկած է լեզվի թույլ, նշույթավորված

⁵ Историко-типологическая морфология германских языков, 1977, т. 2 128-129

տարրերի վերածումը ավելի կայուն, բնական, ոչ նշույթավորված տարրերի, տվյալ դեպքում անկանոն, թերի, անկայուն հիմքերը նմանեցվում են ավելի կանոնավոր, գործառական ավելի մեծ հաճախականությամբ բնութագրվող հիմքերին: Բացի դրանից անբնական ու հակասական կարելի է համարել նաև այն հանգամանքը, որ մեկ հոլովի համար քերականական արտահայտման ցուցիչը տարբեր կարող էր լինել և նույն հոլովը տարբեր հիմքերում տարբեր վերջավորություն կարող էր ունենալ՝ առանց բովանդակային որևէ տարբերության:

Ենթադրվել է, որ գերմանական լեզուներում կատարվել է նաև որոշ հոլովաձևերի ամբողջական սղում: Բացառական և ներգոյական հոլովների գործառույթը արդեն իսկ վաղ գերմանական շրջանում հիմնականում կատարել է տրական հոլովը, կոչականը համընկել է ուղղականի հետ՝ բացառությամբ գոթերենում պահպանված որոշ ձևերի, իսկ գործիականը, որը հանդես է եկել միայն եզ. թվում և միայն արական ու չեզոք սեռի գոյականների հետ, մասամբ պահպանվել է դեռ հվգ. որոշ ձևերում: Դոլովաձևերի սղման հարցը, սակայն, վիճելի է դառնում, եթե հաշվի առնենք ժամանակակից լեզվաբանական տեսությունների կողմից նախնական երկհոլովյան համակարգի վերականգնումը: Վաղ հնդեվրոպական շրջանի համար վերականգնելով միայն երկու հոլովական ձև՝ սեռական և արսոյուտիվ՝ Յու. Գաբրիելյանը նշում է, որ մյուս հոլովները ձևավորվել են ավելի ուշ՝ կամ հ.ե. ընդհանրության քայքայման շրջանում, կամ էլ հետնորդ լեզուների ինքնուրույն զարգացման ընթացքում⁶: Ուստի պարտադիր չէ, որ գերմանական լեզուներն ունենային լատիներենին բնորոշ բոլոր հոլովաձևերը: Իսկ համապատասխան հոլովական իմաստները, բնական է, որ պետք է արտահայտվեին հիմնականում նախդիրներով կազմված շրջասական ձևերով՝ պայմանավորված տվյալ փուլում գերմանական լեզուներին բնորոշ հիմնական առանձնահատկությամբ՝ վերլուծական կառուցվածքների ձևավորման միտումով, որն էլ ընկած է գերմանական լեզուների ձևաբանական փոփոխությունների մեծ մասի հիմքում:

Գերմանական լեզուների պատմական ուսումնասիրությամբ զբաղվող լեզվաբանները միասնական են այն հարցում, որ գերմանական լեզուների ձևավորման և ընդհանուր գերմանական շրջանի ամենակարևոր առանձնահատկությունը համադրական լեզվակառուցվածքից աստիճանական անցումն է վերլուծական լեզվակառուցվածքի: Նման բնորոշման համար հիմք են հանդիսացել և վերոհիշյալ արմատական ձևային կարևորման ու շեշտման, անշեշտ վանկերի իմաստային թուլացման ու սղման, ներքին թեքման՝ որպես

⁶ Յու. Գաբրիելյան, Դնդեվրոպական լեզուներում հոլովական ձևերի զարգացման խնդիրը, Բանբեր Երևանի համալսարանի, 3, 2005, էջ 89-90

քերականական արտահայտչամիջոցի դերի բարձրացման ու հավելյալ լրացուցիչ վերլուծական կազմությունների առաջացման և արտաքին թեքման հնարավորությունների նվազման միտումները: Գերմանական լեզուների զարգացման հետագա փուլերում զարգացման այս ընդհանուր ուղղությունն աստիճանաբար հանգեցրել է քերականական կարգերի արտահայտման համադրական կառուցվածքների վերացմանը, իսկ համադրական ձևերի պակասը լրացվել է նոր, վերլուծական տիպի կազմություններով, օրինակ՝ հոլովական վերջավորությունները փոխարինվել են համապատասխան կապերով, դերանուններով, խոնարհման վերջավորությունների պակասը լրացվել է օժանդակ բայերով կազմված կառուցվածքներով, դերանուններով և այլն: Գոթերենում, օրինակ, բավականին գործուն է եղել բայի անվանական ձևերի կիրառումը սպասարկու բառերի հետ, ինչն էլ հետագայում հիմք է հանդիսացել վերլուծական բայական ձևերի ձևավորման համար: Ղեռես ընդհանուր գերմանական շրջանում «լինել» և «դառնալ» իմաստն արտահայտող բայերը հաճախ հանդես են եկել խոնարհվող բայի երրորդ ձևի՝ Partizip II-ի հետ: Նման կազմությունները լայնորեն տարածվել են գոթերենում՝ արտահայտելով կերպային (Partizip I-ի հետ «լինել» բայի կիրառումը), ժամանակային (ապառնի ժամանակի կազմությունը, ինչպես նաև բայի անորոշ ձևերի՝ ինֆինիտիվի կապակցությունները տարբեր ոչ լինմաստ բայերի հետ) և սեռային (Partizip II-ի և «լինել» ու «դառնալ» բայերի կապակցությունները) հարաբերություններ:⁷ Զին վերին գերմաներենում նույնպես տարածված են եղել Partizip II-ի և «լինել» իմաստն արտահայտող *sîn*, *wesan* և *werdan* «դառնալ» բայերի կապակցությունները՝ հիմք հանդիսանալով վերլուծական Passiv-ի կազմության համար: Բոլոր հին գերմանական լեզուներին, այդ թվում նաև հին վերին գերմաներենին բնորոշ են եղել նաև Partizip II-ի ու *sîn*, *wesan* «լինել», *haben*, *eigen* «ունենալ» բայերի կապակցությունները, որոնց հիման վրա հետագայում զարգացել են վերլուծական Perfekt, Plusquamperfekt ժամանակաձևերը: Այսպիսով հին վերին գերմաներենից սկսած բայական հարացույցում նախնական շարահյուսական կապակցությունների հիման վրա ձևավորվել են վերլուծական քերականական ձևերը: Նոր վերին գերմաներենում վերլուծական ձևերի առաջացման միտումը շարունակել է գործել նաև բարբառներում և խոսակցական լեզվում, որտեղ բայի խոնարհման համակարգում տարածվել է տու օժանդակ բայով ձևը, ինչպես օրինակ՝ ներկա ժամանակաձևում *er tut laufen* – *er läuft* ձևի փոխարեն, իսկ կոնյունկտիվի համակարգում *ist* բայով կազմված վերլուծական ձևերը

⁷ Историко-типологическая морфология германских языков, 1977, т. 2 105-106

մրցակցում են անցյալ ժամանակն արտահայտող թեքական ձևերի հետ՝ *er schrieb* – *er täte gern schreiben*, *wir kämen* – *wir täten gern kommen*⁸։

Սակայն, ինչպես ցույց է տալիս գերմաներեն լեզվի պատմությունը, այս դեպքում նույնպես լեզվի փոփոխության միտումները միայն մեկ ուղղությամբ չեն գործել, և համադրական կազմությունները միայն մասնակիորեն են անհետացել կամ էլ ոչ միշտ են փոխարինվել համապատասխան վերլուծական ձևերով։ Մասնակիորեն պահպանվել են, օրինակ, թե հոլովական որոշ վերջավորություններ և թե դիմային վերջավորություններ, բացի դրանից արմատական վանկերում գործել է հերթագայությունների համակարգը։ Համադրական կազմությունների պահպանման և հետագա զարգացման լավագույն օրինակ է հանդիսանում, ըստ Թ. Ռոեկեի, նաև բառաբարդման միջոցների զարգացումն ու ընդլայնումը հատկապես նոր վերին գերմաներենի զարգացման վաղ շրջանում, ինչպես նաև այդ նույն շրջանում ածանցյալ ձևերի ավելացումը (մինչդեռ միջնադարյան գերմաներենում դիտվել է այս նույն երևույթի հակառակ միտումը, այն է՝ ածանցման հնարավորությունների նվազում), թվի կարգի արտահայտման միջոցների ընդլայնումը՝ պայմանավորված ծայնափոխության քերականացմամբ և հոգնակիակերտ մասնիկների ավելացմամբ⁹։ Սա նշանակում է, որ վերլուծական կազմությունների զարգացմանը զուգահեռ պահպանվել և աստիճանաբար նույնիսկ զարգացել են նոր համադրական կառույցներ՝ հատկապես գերմաներենում, այդ պատճառով էլ ժամանակակից գերմաներենում՝ ի տարբերություն անգլերենի, պահպանվել են համադրական լեզվակառուցվածքին բնորոշ տարրեր և ըստ լեզուների ձևաբանական դասակարգման՝ այն շարունակում է պատկանել թեքական տիպին, մինչդեռ անգլերենը, ինչպես նաև դանիերենը, կարող են ծառայել որպես վերլուծական կառուցվածքի ավելի հետևողական զարգացման օրինակ։ Այսպիսով, սխալ կլիներ գերմանական լեզուների զարգացման կարևոր առանձնահատկությունը համարել միայն վերլուծական լեզվակառուցվածքի անցման միտումը, քանի որ դրան հակառակ գործել է նաև հակադիր՝ թեքական որոշ ձևերի պահպանման միտումը, և միայն նման հակադարձ միտումների գործողությամբ է հնարավոր բացատրել վերլուծական կառուցվածքների զարգացմանը զուգահեռ համադրական նոր ձևերի առաջացումը։ Հատկանշական է նաև այն, որ գերմաներենում նոր համադրական ձևեր առաջացել են հիմնականում վաղ նոր վերին գերմաներենի շրջանում, իսկ 18-րդ դարից սկսած դիտվել է նաև որոշ վերլուծական ձևերի կրճատումը, ինչպես օրինակ՝

⁸ В. Жирмунский, История немецкого языка, 1965, т. 297-299

⁹ Th. Roelcke, Drift? Die Strömungstheorie im Licht der deutschen Sprachgeschichte, 2000, т. 174-179

15-րդ դարից սկսած կոնյունկտիվի ձևերի կազմումը առավելապես մոդալ բայերով կազմված կապակցություններով և վերջիններիս նվազումը 18-րդ դարից սկսած:¹⁰ Նմանատիպ երևույթ կարելի է տեսնել նաև հոլովման համակարգում: Ինչպես արդեն նշվել է, հվզ.-ում հոլովման տարբեր տիպերի կրճատումը և միասնականացումը հանգեցրել է հոլովման երեք տեսակների ձևավորմանը, և ըստ այդ մույն միասնականացման միտումի պետք է որ այլ մոր տեսակ չառաջանար, սակայն մվզ.-ում առաջանում է այսպես կոչված՝ խառը հոլովման խումբը, որը կրկին տանում է հարացույցային ձևերի ընդարձակման՝ չնայած հոլովման այս տիպին պատկանող բառերի սահմանափակ թվին:

Այսպիսով, գերմաներենի ձևաբանական համակարգի զարգացման հիմքում տեսնելով վերլուծական կառուցվածքների զարգացման միտումը՝ չպետք է բացառել կամ անբնական համարել համադրական ձևերի պահպանման ու նաև առաջացման հնարավորությունը: Ուստի այն երևույթները, որոնք որպես բացառություններ կարող են դիտարկվել, եթե ընդունվի միայն վերլուծական կառուցվածքների զարգացման միտումը, իրականում հանդիսանում են մեկ այլ, հակադարձ միտումի ազդեցության արդյունք և լիովին բացատրելի են հատկապես գերմաներենում, որտեղ, ինչպես տեսանք, անցումը համադրականից վերլուծական լեզվակառուցվածքի վերջնական ձևավորում չի ստացել՝ ի տարբերություն անգլերենի: Չետևաբար սխալ է գերմանական լեզուների զարգացման ընթացքում հանդիպող փոփոխությունները բացատրել կամ միայն վերլուծական լեզվակառուցվածքի առաջացման միտումով, կամ էլ միայն հնչյունական որոշ փոփոխություններով, ինչպես օրինակ, վերջնավանկերի սղումը, որոնք իրենց հերթին նույնպես ներլեզվական միտումների ազդեցության արդյունք են:

¹⁰ Th. Roelcke, նշվ. աշխ., էջ 176, 179